ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԱՑ-ՆԳ-2019/35

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.04.2019թ. թիվ 26/26-1/6979-2019 գրությամբ Ա/Ձ Վահագն Սարգսյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 16.04.2019թ. թիվ 01/61-6832 գրության հիման վրա, 26.04.2019թ. թիվ 26/26-1/6979-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել Ա/Ձ Վահագն Սարգսյանին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Ա/Ձ Վահագն Սարգսյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Ա/Ձ Վահագն Սարգսյանը պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/35 ընթացակարգի շրջանակներում 02.05.2019թ. ժամը 09:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր մասնակցությունը և հայտնել, որ.

«Երևանի քաղաքապետարանի (հետայսու նաև՝ Պատվիրատու) պնդումներն անհիմն են, քանի որ «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/66» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում իր կողմից մասնակցության հայտով ներկայացված թիվ 3 հավելվածը պատշաճ կերպով էլեկտրոնային ստորագրությամբ ստորագրված է եղել, միաժամանակ ավելացնելով, որ Պատվիրատուի կողմից իրեն ուղղված շտկման վերաբերյալ ծանուցմանը չի պատասխանել, քանի որ տվյալ ժամանակահատվածում բացակայել է քաղաքից»:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 16.04.2019թ. թիվ 01/61-6832 գրությամբ հայտնել է.

«Պատվիրատուի կողմից կազմակերպված «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/66» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել Ա/Ձ Վահագն Սարգսյանը:

Ընթացակարգի շրջանակներում Մասնակցի կողմից ներկայացված թիվ 3 հավելվածի թղթային տարբերակի վրա արտացոլված է եղել էլեկտրոնային ստորագրությունը, սակայն ֆայլի էլեկտրոնային պահոցում բացակայել է էլեկտրոնային թվային ստորագրության և նույնականացման համար հավաստագրերը:

Գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 41-րդ կետի պահանջով՝ ծանուցել է Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը և գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով կարգի 42-

րդ կետի պահանջով՝ մերժել է Մասնակցի կողմից ներկայացված հայտը, որը հանգեցրել է գնման գործընթացին վերջինիս հետագա մասնակցության դադարեցմանը և վերոգրյալ իրավական հիմքերով պայմանավորված՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետով, առաջարկել է Մասնակցի նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/35 ընթացակարգի շրջանակներում 02.05.2019թ. ժամը 09:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/35 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/35 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կազմակերպվել է «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/66» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Վահագն Սարգսյանը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.04.2019թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ Մասնակցի կողմից ներկայացված թիվ 3 հավելվածի վրա արտացոլված է էլեկտրոնային ստորագրությունը, սակայն ֆայլի դարաններում բացակայում է ստորագրությունը:

3. 04.04.2019թ. Գնահատող հանձնաժողովի քարտուղարը ծանուցել է Ա/Ձ Վահագն Սարգսյանին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել հայտում արձանագրված անհամապատասխանությունը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 08.04.2019թ. ժամը 12:30-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ա/Ձ Վահագն Սարգսյանի հայտը մերժել

է այն հիմնավորմամբ, որ վերջինս սահմանված ժամկետում չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

5. Ի պատասխան Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանի 23.05.2019թ. գրության՝ «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ն գրությամբ հայտնել է հետևյալը. *«ԵՔ-ԳՀԾՁԲ-19/66» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին Ա/Ձ Վահագն Սարգսյանի կողմից ներկայացրած մասնակցության հայտի* ***թիվ 3*** *հավելվածի էլեկտրոնային ստորագրությամբ վավերացրած լինելու փաստը ստուգելու վերաբերյալ, հայտնում ենք, որ* նշված ***հավելվածը չի պարունակում թվային էլեկտրոնային ստորագրություն, ինչպես նաև տվյալ փաստաթղթի ստորագրման փաստի մասին, «ԷԿԵՆԳ» ՓԲԸ տվյալների բազաներում որևէ տեղեկատվություն չկա:***

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 26.04.2019թ. թիվ 26/26-1/6979-2019 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 16.04.2019թ. թիվ 01/61-6832 գրությունը և կից փաստաթղթերը, ՍՑ-ՆԳ-2019/35 ընթացակարգի շրջանակներում Ա/Ձ Վահագն Սարգսյանի կողմից հայտնած դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու՝ Կարգ) Կարգի 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ ***Հրավերով նախատեսվում է նաև, որ*** էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատուի և մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված)

տարբերակով: ***Գնման ընթացակարգն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով կազմակերպված լինելու դեպքում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ***, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Կարգ 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Այսպիսով՝ Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կազմակերպվել է «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/66» ծածկագրով գնանշման

հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Վահագն Սարգսյանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.04.2019թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ Մասնակցի կողմից ներկայացված թիվ 3 հավելվածի վրա արտացոլված է էլեկտրոնային ստորագրությունը, սակայն ֆայլի դարաններում բացակայում է ստորագրությունը:

04.04.2019թ. Գնահատող հանձնաժողովի քարտուղարը ծանուցել է Ա/Ձ Վահագն Սարգսյանին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել հայտում արձանագրված անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 08.04.2019թ. ժամը 12:30-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ մերժել է Ա/Ձ Վահագն Սարգսյանի հայտը, այն հիմնավորմամբ, որ Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունը:

Այսպիսով, վերը նշված նորմերը հստակ սահմանում են, որ այն դեպքում, երբ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չի շտկվում, ապա հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ա/Ձ Վահագն Սարգսյանը պատշաճ կերպով ծանուցված լինելով վերը նշված անհամապատասխանության մասին չի շտկել, ուստի գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը և մերժելով Ա/Ձ Վահագն Սարգսյանի հայտը գործել է իրավաչափ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ***չի ներկայացնում հրավերով նախատեսված***

փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում սպանձնված պարտավորության խախտում:

Վերոգրյալով պայմանավորված՝ գտնում եմ, որ Ա/Ձ Վահագն Սարգսյանը «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/66» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում, քանի որ սահմանված ժամկետում գնահատող հանձնաժողովին չի ներկայացրել հայտի թիվ 3 հավելվածի շտկված տարբերակը, ուստի նման պայմաններում գտնում եմ, որ առկա են Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 26.04.2019թ. թիվ 26/26-1/6979-2019 գրությամբ Ա/Ձ Վահագն Սարգսյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ա/Ձ Վահագն Սարգսյանին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**